2· ՍԱՊՈՆՋԻ·—Գիւղս կը գտնուի Շապոյէ $1\ ^1/_2$ ժամ արեւելեան հիւսիս, 2 ժամ Չամչա լերան գագաթէն ի հարաւ Գեզգեզքի արեւմուտքն 20 տուն բնակիչ ունի եւ կայ փոքրիկ ձորակի մի աջ ափին վերայ։

Գիւղէս ի հիւսիս, ի Չամչա կը բարձրանայ մի խորանդունդ ձոր, որ երկու կողմն կարծր մոխրագոյն եւ բարձր ժայռեր պատած են, այս ժայռերու միջավայրն, ջրի երկու ափերն գիջի սուսած ծառներով եւ փոքրիկ անտառակներով պատած է, այս անտառակներու մէջ նոյնպէս փոքրիկ թեղի, ուռի, եղուըրդի, եւն. ծառեր աճած են։

Այս ծառաստաններու եւ ձորակիս շատ մի այրերու մէջ ցմիշտ տեսնուած են արջեր, գորս քրդեր ցմիշտ կորսան։

Ձորիս գլխէն ի հիւսիս, մերձ Սամաքար կոչուած քարալերան կան երեք գերեզմաններ, որոց վերայ նաեւ տապանաքարեր, որք առաջ արեւելք դարձած էին, այժմ քրդեր ի հարաւ դարձուցած են եւ անուանած Շէհիտներ (Նահատակ)։

Այս տեղէն անց ու դարձ անող քուրդն պարտաւորեալ է չոքիլ, քանի աղօթք մրմնջել, ապա մեկնիլ։

Քարերը յիշատակարան չունին, ոմանք կը հաստատեն թէ տապանաքարերու գրուած երեսն ի գետին դարձուցած են քրդեր։

3· ՎԵՐԵԹԷՔ·—Շապոյի հարաւն, Ամատէն $1\ ^1/_2$ ժամ արեւելեան հիւսիս, 1 ժամ յարեւմուտս Գոմքայ, ունի, 17 տուն բնակիչ։

Վերեթէք անունով մի այլ գիւղ եւս կայ աւերակ։ «Վեր» հայերէն «վերին» կը նշանակէ, «Իթէք» թուր-